ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 17 հունիսի 2025 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով.

նախագահող՝ Արման Դիլանյանի,

դատավորներ՝ Հրայր Թովմասյանի,
Դավիթ Խաչատուրյանի,
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի,
Էդգար Շաթիրյանի,
Սեդա Սաֆարյանի,
Արթուր Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչներ՝ Առողջապահության նախարարի առաջին տեղակալ Լենա Նանուշյանի, Ֆինանսների նախարարի տեղակալ Վահան Սիրունյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2025 թվականի փետրվարի 28-ին Երևանում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Առողջապահության որակի բարելավման ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2025 թվականի ապրիլի 3-ի N 361-Ա որոշմամբ հավանություն է տվել 2025 թվականի փետրվարի 28-ին Երևանում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Առողջապահության որակի բարելավման ծրագիր» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է նշված համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2025 թվականի ապրիլի 11-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի (այսուհետ՝ ԱԶԲ) միջև «Առողջապահության որակի բարելավման ծրագիր» վարկային համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2025 թվականի փետրվարի 28-ին Երևանում:

2. Համաձայնագրով նախատեսվում է ԱԶԲ-ի կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրել 45,310,000 (քառասունհինգ միլիոն երեք հարյուր տասը հազար) եվրո վարկ՝ բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացմանն աջակցելու նպատակով:

3. Համաձայնագրի վավերացման նպատակահարմարության վերաբերյալ տեղեկանք-հիմնավորման համաձայն՝ Ծրագրի նպատակն է խթանել բարեփոխումները հետևյալ ուղղություններով՝

1) առողջապահական հաստատությունների կառուցում ու բարելավում,

2) առողջապահական ծառայությունների որակի գնահատում և հաշվետվողականության թվայնացում ու ինստիտուցիոնալացում,

3) բժշկական հաստատությունների լիցենզավորում,

4) առողջապահության ոլորտի մարդկային կապիտալի զարգացում,

5) հեռաբժշկության պիլոտային ծրագրի իրականացում,

6) էլեկտրոնային առողջապահության գործիքների կիրառության բարելավում:

4. Համաձայնագիրն ունի չորս հավելված՝ Հավելված 1. **Ծրագրի նկարագրությունը,** Հավելված 2. **Մարման ժամանակացույցը,** Հավելված 3. **Վարկային միջոցների հատկացումը և առհանումը** և Հավելված 4. **Ծրագրի իրականացումը:**

5. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես՝

5.1. պատրաստել Ծրագրի տարեկան ֆինանսական հաշվետվությունները՝ ԱԶԲ-ի համար ընդունելի ֆինանսական հաշվետվողականության ստանդարտների համաձայն (հոդված 4, բաժին 4.02, կետ ա),

5.2. ապահովել այդ ֆինանսական հաշվետվությունների տարեկան աուդիտի անցկացումն անկախ աուդիտորների կողմից, որոնց որակավորումները, փորձը և բանիմացությունն ընդունելի են ԱԶԲ-ի համար՝ ԱԶԲ-ի կողմից ընդունելի աուդիտի ստանդարտների համաձայն (հոդված 4, բաժին 4.02, կետ ա),

5.3. ապահովել յուրաքանչյուր նման աուդիտի շրջանակներում աուդիտորների կողմից այնպիսի հաշվետվության պատրաստումը, որը ներառում է աուդիտորների կարծիքը (կարծիքները)՝ ֆինանսական հաշվետվությունների և վարկային միջոցների օգտագործման մասին, և ղեկավարությանն ուղղված նամակը (որով ներկա-

յացվում են Ծրագրի ներքին հսկողության թերությունները, որոնք բացահայտվել են աուդիտի ընթացքում, այդպիսիք լինելու դեպքում) (հոդված 4, բաժին 4.02, կետ ա),

5.4. ներկայացնել ԱԶԲ-ին համապատասխան յուրաքանչյուր հարկաբյուջետային տարվա ավարտից ոչ ուշ, քան 6 ամիս հետո աուդիտի ենթարկված այդ ֆինանսական հաշվետվությունների, աուդիտի հաշվետվության և ղեկավարությանն ուղղված նամակի օրինակները, բոլորն անգլերենով, ինչպես նաև այդ փաստաթղթերի և դրանց աուդիտի վերաբերյալ ցանկացած այնպիսի տեղեկատվություն, որն ԱԶԲ-ն ողջամտորեն պարբերաբար կպահանջի (հոդված 4, բաժին 4.02,, կետ ա),

5.5. հնարավորություն ընձեռել ԱԶԲ-ին՝ աուդիտորների հետ քննարկելու Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները և Ծրագրին առնչություն ունեցող ֆինանսական հարցերը (հոդված 4, բաժին 4.02, կետ գ),

5.6. ԱԶԲ-ին ներկայացնել կամ ապահովել, որ ԱԶԲ ներկայացվեն՝

1) Ծրագրի իրականացման վերաբերյալ, այդ թվում նաև՝ ՄԿՑ-ների իրականացման, Ծրագրի գործողությունների իրականացման և թույլատրելի ծախսերի վերաբերյալ կիսամյակային հաշվետվությունները և

2) ԱԶԲ-ի կողմից ողջամիտ կերպով պահանջվելու դեպքում՝ վերոհիշյալ «ա» ենթակետում նշված հաշվետվությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ, ինչպես նաև Ծրագրի իրականացման վերաբերյալ այլ տեղեկատվություն (հոդված 4, բաժին 4.03),

5.7. հնարավորություն ընձեռել ԱԶԲ-ի ներկայացուցիչներին՝ ստուգելու Ծրագիրը և դրան առնչվող ցանկացած գրառում և փաստաթուղթ (հոդված 4, բաժին 4.04),

5.8. ապահովել, որ Ծրագիրն իրականացվի Ծրագրի իրականացման փաստաթղթում սահմանված մանրամասն միջոցառումների համաձայն (Հավելված 4, կետ 1),

5.9. ապահովել, որ Ծրագրի ողջ ընթացքում ապահովվի համապատասխանությունը Ծրագրի շրջանակներում ապահովված մասհանումների հետ կապված յուրաքանչյուր ցուցանիշի (Հավելված 4, կետ 3),

5.10. ապահովել, որ գնումների ոլորտում Ծրագրի բոլոր գործողություններն իրականացվեն ժամանակին և արդյունավետ կերպով (Հավելված 4, կետ 9),

5.11. թարմացնել իր հանրային կայքէջը՝

1) Ծրագրի ընթացքի մասին տեղեկատվություն տրամադրելու,

2) Ծրագրին առնչվող՝ աուդիտի ենթարկված տարեկան ֆինանսական հաշվետվությունները հասանելի դառնալուն պես դրանք հրապարակելու,

3) Ծրագրի իրականացման վերաբերյալ համապատասխան այլ տեղեկատվություն տարածելու համար (Հավելված 4, կետ 18):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2025 թվականի փետրվարի 28-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Առողջապահության որակի բարելավման ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

17 հունիսի 2025 թվականի
ՍԴՈ-1784